ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

09 հուլիսի 2014 թվականի N 23 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 23-ի թիվ 116-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 01/11.2/3658-14 գրությունը՝

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 23-ի թիվ 116-Ա որոշման համաձայն «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված և ուղղակի վաճառքի ձևով «Իռ-Վինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օտարված՝ ՀՀ Տավուշի մարզի, Դիլիջան քաղաքային համայնքի, Սայաթ-Նովա փողոց թիվ 7 հասցեում գտնվող՝ 2947.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենք, շինությունները և դրանց սպասարկման ու օգտագործման համար հատկացված՝ 0.7530 հա հողամասը «Իռ-Վինգ» ՍՊ ընկերությանը հանձնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արթուր Ռոստոմյան	- Հանձնաժողովի նախագահ, <<Դիլիջանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
Թերեզա Եսայան	- Հանձնաժողովի քարտուղար, <<Դիլիջանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահ
	Հանձնաժողովի անդամներ
Արման Գևորգյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
Արտակ Սարգսյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Նաիրի Մելքումյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ
Համլետ Փիրումյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ
Սամվել Քամալյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ 5-օրյա ժամկետում իրականացնել ՀՀ Տավուշի մարզի, Դիլիջան քաղաքային համայնքի, Սայաթ-Նովա փողոց թիվ 7 հասցեում գտնվող՝ 2947.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենք, շինությունները և դրանց սպասարկման ու օգտագործման համար հատկացված՝ 0.7530 հա հողամասը «Իռ-Վինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելու աշխատանքները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

09 հուլիսի 2014թ.
ք. Իջևան